ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԹԻՎ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՂԱՎ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՀԵՌԱԳՐԵՐԸ ԵՎ ՍՏԱՑՎԱԾ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ՆԻԿԻՏԱ ԽՐՈՒՇՉՈՎԻՆ

ՄՈՍԿՎԱ

Մեծարգո Պարոն Վարչապետ.

Հայաստանյայց եկեղեցու և անձամբ Մեր անունից սրտագին շնորհավորում ենք Ձեզ և Սովետական բարեխնամ կառավարության բոլոր անդամներին՝ Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի 42-րդ պանծալի տարեդարձի առթիվ:

Ամբողջ աշխարհի մարդկությունը և Քրիստոնեական եկեղեցին բարձր են գնահատում անհողդողդ եռանդով մղած Ձեր պայքարը՝ հանուն աշխարհի խաղաղության և ժողովուրդների բարեկամության:

Թո՛ղ անսասան մնա Սովետական մեծ Միությունը որպես խաղաղության հզոր պատվար: Թո՛ղ երջանիկ ապրեն ու առաջադիմեն խաղաղության մեջ Սովետական եղբայրական ժողովուրդները:

Մենք միշտ աղոթում ենք առ Աստված՝ Ձերդ Գերազանցության քաջառողջության և մարդասեր գործոց կատարյալ հաջողության համար:

ՎԱԶԳԵՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Մեծարգո Նախագահ.

Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի 42-րդ տարեդարձի առթիվ հաճեցեք ընդունել անձամբ Մեր և էջմիածնի միաբանության ջերմագին շնորհավորանքները և բարի մաղթանքները:

Թո՛ղ Տերը անսասան պահի Սովետական հզոր Միությունը որպես աշխարհի խաղաղության անպարտելի պատվար և թո՛ղ ծաղկի ու առավել բարգավաճի Սովետական մեծ Միությունը և նրա անբաժանելի մասը կազմող մեր սիրելի Սովետական Հայաստանը:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ՔՈՋԻՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի 42-րդ տարեդարձի առթիվ հաճեցեք ընդունել Մեր և էջմիածնի միաբանության ջերմ շնորհավորանքները անձամբ Ձեզ և Սովետական Հայաստանի կառավարության անդամներին:

Աղոթում ենք առ Աստված Սովետական հզոր Միության հետագա ծաղկման համար և մաղթում ենք սովետական ժողովուրդներին ստեղծագործական նոր հաջողություններ և խաղաղ ու երջանիկ կյանք:

Սովետական մեծ Հայրենիքի դրոշի ներքո թո՛ղ առավել վերաշինվի ու ծաղկի մեր սիրելի Մայր Հայրենիք Սովետական Հայաստանը:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՍՍՌՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՀԱՐԳ ՊԱՐՈՆ ՊՈՒԶԻՆԻՆ

ՄՈՍԿՎԱ

Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի 42-րդ տարեդարձի առթիվ ջերմագին շնորհավորում և ողջունում ենք Ձեզ անձամբ, Մեր և Ս. էջմիածնի միաբանության անունից:

Աղոթում ենք առ Աստված հզոր Սովետական Միության հետագա ծաղկման համար: Խաղաղություն, բարգավաճում և նորանոր հաջողություններ Սովետական մեծ, բազմազգ Հայրենիքին:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հոկտեմբերյան Մեծ ռևոլյուցիայի 42-րդ տարեդարձի առթիվ ընդունեցեք Մեր և Մայր Աթոռի միաբանության ջերմ շնորհավորանքները և լավագույն բարեմաղթությունները:

Միշտ աղոթող ենք Սովետական մեծ Միության ծաղկման ու նորանոր հաջողությանց համար: Խաղաղությո՛ն ու երջանիկ կյանք Սովետական բազմազգ ժողովուրդներին: Թո՛ղ այդ ժողովուրդների եղբայրական ընտանիքում միշտ ապրի, զորանա և բարգավաճի հայ ժողովուրդը:

ՎԱԶԳԵՆ Ա.
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱՄԻՆ

Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Նախագահության և անձամբ իմ անունից շնորհակալություն եմ հայտնում Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 42-րդ տարեդարձի առթիվ եղած Ձեր սրտագին շնորհավորանքի և բարեմաղթությունների համար:

ԱՌՈՒՇԱՆՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ
ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ

ԵՐԵՎԱՆ

Սովետական Հայաստանի Կառավարության և անձամբ իմ անունից շնորհակալություն եմ հայտնում այն ողջույնների և բարի ցանկությունների համար, որ Դուք եղել եք մեզ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 42-րդ տարեդարձի առթիվ:

Ա. ՔՈՉԻՆՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ

ԵՐԵՎԱՆ

Սրտագին շնորհակալություն Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 42-րդ տարեդարձի առթիվ Ձեր ջերմ ողջույնի և շնորհավորանքի, ինչպես նաև սովետական ժողովրդին նոր հաջողությանց բարի մաղթանքների համար:

Փոխադարձաբար ցանկանում ենք Ձեզ քաջառողջություն և երջանկություն:

Ա. ՊՈՒՉԻՆ
ՍՍՌՄ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԿՐՈՆԱԿԱՆ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՄՈՍԿՎԱ

Հաճեցեք ընդունել իմ անկեղծ շնորհակալությունը Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի 42-րդ տարեդարձի առթիվ Ձեր եղած շնորհավորանքների համար:

Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ԵՐԵՎԱՆ